ԻՆԺԵՆԵՐԻՆԳ ԳՐՈՒՊ ՍՊԸ
ENGINEERING GROUP LLC

«27» Փետրվար 2026թ. №83495629-19


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000031, 1-ին դաս

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԱԾ Է

2024-06-20, «ԻՆԺԵՆԵՐԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆ Փ., 7, 101 ԲՆ.

Գործողության ժամկետը՝ 20.06.2029թ.

UG31-3C68-A29D-FFCC

## ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ № 83495629-19

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Տնօրեն՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

27 Փետրվար 2026թ.

Հասցե՝ ՀՀ, Երևան, 0033, Կոմիտաս 12, ն.100
Address: 12 Ave. Komitas, n.100, Yerevan, 0033, RA
engineering.group@internet.ru
www.egproject.am
+374 43 06 70 09
+374 93 96 11 44

# ՀՀ, ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԻՊԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱՆԳԱՌԻ ՆԱԽԱԳԻԾ

*Պատվիրատու՝* Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

*Նախագծող՝* «ՍՊ2» ՍՊԸ

ՆԱԽԱԳԾՄԱՆ ՀԻՄՔ՝ Նախագիծը մշակվել է ըստ պատվիրատուի կողմից ներկայացված տեխնիկական առաջադրանքի

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

### Ճարտարապետական մաս

ՀՀ Կոտայքի մարզի, Ակունք համայնքում կառուցվող տրանսպորտային տիպային կանգառի ծածկը երկթեք է՝ անհավասար լանջերով: Այն ծալքաթիթեղից է (ԿՊ 25, 0.4 մմ, RAL 7024), ծածկի ստորին հատվածը երեսպատված է 80 x 30 մմ սոճու փայտով, որը կողապատի երեսպատումով իջնում է և դառնում նստարան: Հատակը սալարկված է բազալտով: Կանգառի կողաճակատներից մեկը ապակեպատ է, ինչը ապահովելու է տեսանելիությունն ու որոշ չափով պաշտպանելու է քամու ուղիղ ազդեցությունից: Կանգառի մետաղական մասերը յուղաներկված են RAL 7024՝ համապատասխան ծալքաթիթեղի գույնին: Փայտյա երեսպատումը անհրաժեշտ է մշակել լաքային հիմք ունեցող հականեխիչով:

- Կագառի հատակի մանրամասները՝
  - Բազալտե սալեր 30 մմ
  - Սոսինձ 20 մմ
  - Ջրամեկուսիչ
  - Ե/Բ հարթաշերտ 100 մմ
  - Ջրամեկուսիչ
  - Տոփանած խիճ 100 մմ
  - Խճով տոփանված բնահող
- Կանգառի հատակի մասնագրեր՝
  - Հողային աշխատանքներ, 12 խմ
  - Բազալտե սալեր երկշյնական ակոսով 30 մմ, 8.2 քմ
  - Սոսինձ, 8.2 քմ
  - Մետաղական թիթեղ 2 մմ լաքապատ L=400 մմ, 11.5 գծմ
  - Ջրամեկուսիչ, 31.8 քմ
  - Տոփանված խիճ 100 մմ, 0.82 խմ
  - Խճով տոփանված բնահող 200 մմ, 1.6 խմ

Կանգառի ծածկի և կողային ճակատի փայտյա երեսպատումը նախատեսվում է 83.6 գծմ սոճու հականեխիչ լաքային մշակմամբ 80*30 մմ փայտից:
Կանգառի ծածկը նախատեսվում է 5.6 քմ ԿՊ 25, 0.4 մմ, RAL 7024 պրոֆնաստիլից:
Կանգառի նստարանը նախատեսվում է 21.9 գծմ սոճու հականեխիչ լաքային մշակմամբ 80*30 մմ փայտից:
Ցուցնականի համար նախատեսվում է 0.5 քմ ցինկապատ թիթեղ և 3.4 գծմ մետաղական խողովակ 20*20*2 մմ:

- Ապակյա կողապատի մասնագիր՝
  - Մետաղ. խողովակ 20*20*2 մմ, 7.64 գծմ
  - Մետաղ. անկյունակ 20*20*2 մմ, 7.64 գծմ
  - Թրծված ապակի թափանցիկ 12 մմ, 3.64 քմ

Մետաղական մասը յուղաներկել՝ RAL 7024:

## Կոնստրուկտորական մաս

ՀՀ Կոտայքի մարզի, Ակունք համայնքում կառուցվող կանգառի կոնստրուկտորական մասն իրականացված է ճարտարապետահատակագծային առաջադրանքի և ճարտարապետական նախագծի հիման վրա :
Կանգառը՝ հատակագծում ուղղանկյունաձև է՝ 3.15 × 2.60 մ արտաքին եզրագծով միաձույլ երկաթբետոնե ժապավենային հիմքերով և մետաղե հիմնակմախքով, վերջինս ամրակապվում է ժապավենային հիմքերին և ե/բ հարթաշերտին նախապես թողնված պողպատե ներդիրների միջոցով: Երկաթբետոնե ժապավենային հիմքերը իրականացված են կանգառի հատակի արտաքին պարագծով, 35 × 20 սմ հատվածքի, միաձույլ B25 դասի ծանր բետոնից, ամրանավորված A500C դասի երկայնական ամրաններով և A240 դասի անուրներով:
Կանգառի հենարաններն իրենցից ներկայացնում են C235 դասի պողպատե □40×4 քառակուսի հատվածքի խողովակից և 6մմ հաստությամբ թերթերի համադրությամբ կազմովի ուղղաձիգ ձողեր: Կանգառի տանիքի ծածկի բոլոր ձողերը ընտրված են □40×4, իսկ ճակատային եզրափակողները՝ կազմովի խողովակ-թերթ հեծաններից (ինչպես սյուների դեպքում): Որպես տանիքածածկույթ ընտրված է չժանգոտվող մետաղե թիթեղ:

- Հիմնակմախքի կոնստրուկտիվ հաշվարկն իրականացվել է ստորև բերված բեռնվածքների ազդեցությունից.
  - Մշտական.
    - Ձողերի սեփական քաշ՝ × 1.05,
    - Տանիքի ծածկույթի քաշ (մետաղե թիթեղ )՝ 10 կգ/մ$^2$:
  - Ժամանակավոր կարճատև.
    - Ձյան բեռնվածք՝ 70 × 1.4 = 98 կգ/մ$^2$:
  - Հատուկ բեռնվածք.
    - Սեյսմիկ բեռնվածք: Հաշվարկն իրականացված է 2-րդ սեյսմիկ գոտու համար, գրունտի կարգը պայմանականորեն ընդունված է 3-րդ: Տեղափոխությունների և տատանման պարբերության ստուգման համար՝ $k_1$ = 0.8, իսկ ընտրված հատվածքների կրողունակության (ամրության, տեղային կայունության) ստուգման համար՝ $k_1$ = 0.25 (սեյսմիկ հաշվարկն իրականացված է ըստ ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն» նախագծման նորմերի):

Փոսորակները բացելուց հետո հիմնատակերը ակտավորել ինժեներ-երկրաբանի մասնակցությամբ, անհրաժեշտության դեպքում հիմքերի կոնստրուկցիաներում կատարել փոփոխություն:

❖ Ե/բ հարթաշերտի մանրամասներ՝

- ➢ Հատակ
- ➢ Ջրամեկուսացման վերին շերտ՝ նախատեսել թաց կետերի համար
- ➢ Ե/բ հարթաշերտ B15
- ➢ Ջրամեկուսացման ստորին շերտ՝ նախատեսել գրունտների հնարավոր խոնավության, կամ ջրահագեցման դեպքում
- ➢ Տոփանված խիճ
- ➢ Խճով տոփանված բնահող

Ե/բ միաձույլ հիմքերը նախատեսվում է կառուցել B25 դասի միաձույլ ծանր երկաթբետոնից բազալտե խճի և կվարցային ավազի լցանյութով:

Հիմքերի արտաքին մակերևույթները պետք է ջրամեկուսացնել և պատել պաշտպանիչ շերտով (վերջիններիս ներքին մակերևույթների մեկուսացման աշխատանքները պետք է իրականացնել անհրաժեշտության դեպքում՝ հնարավոր ոչ թույլատրելի խոնավության կամ ջրահագեցման պայմանների առկայության դեպքում): Հարկ է նշել, որ տվյալ շերտերի տեսակը և դրանց իրականացման անհրաժեշտությունը պետք է քննարկել համապատասխան մասնագետի հետ:

Հիմքերի հիմնատակերի, ինչպես նաև, գրունտի սառեցման խորությունը պետք է ճշգրտել տվյալ տեղանքի երկրաբանական փաստացի տվյալների հետ: Անբարենպաստ հիմնատակերի կամ գրունտների (ցածր կրողունակությամբ) ի հայտ գալու դեպքում, պարտադիր դիմել կոնստրուկտորին և երկրաբանին:

Բոլոր ներդիր տարրերը նախատեսվում է տեղադրել բետոնացման աշխատանքներից առաջ, ամրանային խարիսխները տեղային ամրակապել ե/բ հիմքի ամրաններին:

Չնշված կարերի նիստերը ընդունել՝ $k_f$ = 4 մմ,

Պողպատե տարրերը ընտրված են C235 դասի:

Եռակցումներն իրականացնել Э42A էլեկտրոդներով (Ø4-5մմ):

Մետաղե բոլոր թերթերը, խողովակներն, ինչպես նաև ամրանային խարիսխների վերին եզրերը նախատեսվում է ներկել հակակոռոզիան ներկով

Մետաղե բոլոր խողովակների և թերթերի միացումները նախատեսված է եռակցմամբ, հնարավորության դեպքում վերջիններիս ամբողջ պարագծով (բացառությամբ վերջիններիս անկյունները կամ եզրերը):

| Կանգառի հիմնակմախքի մասնագիր | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| № | Անվանում | | Երկ. (մմ) | Քանակ (հատ) | Քաշ(կգ) | |
| | | | | | 1 Տարրի | Ընդ. |
| 1 | Ø 12 | A500C | 65 մ | 1 | 58 | 58 |
| ա | Ø 8 | A240 | 980 | 76 | 0.4 | 29 |
| բ | Ø 8 | | 1140 | 24 | 0.4 | 11 |
| 2 | Ø 8 | | 82 մ | 1 | 32 | 32 |
| 3 | □40 x 4 | | 2100 | 2 | 9 | 19 |
| 3′ | | | 1797 | 2 | 8 | 16 |
| 4 | | | 2420 | 2 | 11 | 22 |
| 4′ | | | 795 | 2 | 4 | 7 |
| 5 | | | 1590 | 2 | 7 | 14 |

ENGINEERING GROUP
08251257

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| T-1 | - 140 x 70 x 6 | | 2150 | 2 | 21 | 43 |
| T-2 | | | 2468 | 2 | 24 | 49 |
| T-3 | | | 1877 | 2 | 19 | 37 |
| T-4 | | | 873 | 2 | 9 | 17 |
| 6 | □40 x 4 | | 1908 | 2 | 9 | 17 |
| 7 | | | 1988 | 8 | 9 | 72 |
| 8 | | | 396 | 8 | 2 | 14 |
| 9 | | | 331 | 4 | 1 | 6 |
| 10 | | | 73 | 2 | 0.3 | 1 |
| ՄՆ-1 | □80 x 40 x 4 | | 1908 | 2 | 13 | 27 |
| ՄՆ-2 | | | 1988 | 1 | 14 | 14 |
| ՄՆ-3 | | | 410 | 2 | 3 | 6 |
| ՄՆ-4 | | | 370 | 2 | 3 | 5 |
| Թ-1 | - 100 x 100 x 6 | | 100 | 1 | 0.5 | 0 |
| ՆՏ-1 | - 200 x 200 x 8 | | 200 | 4 | 3 | 10 |
| a | Ø 12 | A500C | 350 | 32 | 0.3 | 10 |
| Ընդհանուր, կգ | | | | | | 537 |
| Անվանում | | | | | | Ծավ. (մ$^3$) |
| Բետոն B15 (Նախապատրաստական շերտ) | | | | | | 0.50 |
| Բետոն B15 (Հարթաշերտ) | | | | | | 0.60 |
| Բետոն B25 (Հիմքեր) | | | | | | 1.00 |

## Նախահաշվային Մաս

Ներկայացված «ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքի տիպային տրանսպորտային կանգառի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում» օբյեկտի նախահաշվում փորձաքննությամբ դիտարկվել է շին.մոնտաժային աշխատանքների գնահաշվարկը՝ նախագծային ծավալներին համապատասխան, ըստ ծավալաթերթերի:

Շին.նյութերի արժեքները վերցված են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրատարակված 2025թ. թիվ. N7 ինֆորմացիոն տեղեկագրից, կիրառելով հետևյալ տոկոսադրույքները՝

տրանսպորտային ծախսեր - 6.57%

պահեստավորման ծախսեր - 2%

այլ նյութեր - 5%

բոլոր ծախսերի վրա տրված է՝

վերադիր ծախսեր - 13.3%

շահույթ - 11%

Շին.նյութերի նյութածախսերը, աշխատավարձի և մեքենաների շահագործման նորմերը վերցված է 1984թ. նորմատիվներից և վերահաշվարկված ռուբլուց-դրամի անցման գործակիցներով, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրատարակված 2025թ. *թիվ. N7 ինֆորմացիոն տեղեկագրի՝*

աշխատավարձի մասով - 2458.44 դրամ,

մեք.շահագործման մասով - 3048.10 դրամ:

Լոկալ նախահաշիվների հիման վրա կազմվել է օբյեկտային նախահաշիվ, այնուհետև հավաք նախահաշիվ, համապատասխան լիմիտավորված տոկոսադրույքներով:

**Ծանոթություն՝**

**շինարարության ընթացքում օգտագործվող այն նյութերի արժեքները, որոնք ընդգրկված չեն ինֆորմացիոն տեղեկագրում կապալառու պատվիրատուին պետք է ներկայացնի համապատասխան նյութերի հաշիվ ապրանքագրերը և նյութերի գները հիմնավորող համապատասխան փաստաթղթերը:**

Շինարարության նախահաշվային արժեքը կազմել է՝ 1.506.38 հազ, դր. այդ թվում՝ ԱԱՀ 251.06 հազ.դր:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

26.02.2026թ-ին Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH-ի կողմից տրամադրվել է ՀՀ, Կոտայքի մարզ, Ակունք համայնքում տիպային *տրանսպորտային կանգառի նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակված* տարբերակը:

Փորձաքննության ընթացքում կատարված դիտողություններին համապատասխան նախագծի բոլոր բաժիններում կատարվել են ուղղումներ և լրացումներ:

Շինարարության նախահաշվային արժեքը փորձաքննությունից հետո կազմում է՝ 1.560.88հազ, դր. այդ թվում՝ ԱԱՀ 260.15հազ.դր:

Ըստ փորձաքննության՝ նախահաշիվը կազմված է ՀՀ կառավարության 23.06.2011թ. N879-ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան և երաշխավորվում է համաձայնեցման:

Երաշխավորվում է ներկայացված նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և կարող է պատվիրատուի կողմից սահմանված կարգով ներկայացվել համաձայնեցման:

Փորձագիտական խմբի անդամներ՝

Ա. Տոնոյան

Ջ. Խլղաթյան

Պ. Պետրոսյան